ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՆԱԽԱԳԾԱ-ՆԱԽԱՀԱՇՎԱՅԻՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ԿԱԶՄՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԳՀԾՁԲ-18/12-2

«26» նոյեմբերի 2018թ.

ք. Երևան

ՀՀ Արդարադատության նախարարության քրեակատարողական ծառայությունը, ի դեմս ծառայության պետ Ա.Մխոյանի, որը գործում է ծառայության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝Պատվիրատու), մի կողմից, և «Սարգիս և Մարիաննա» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Լ.Լևոնյանի, որը գործում է կանոնադրության հիման վրա (այսուհետ՝Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է նախագծա-նախահաշվային փաստաթղթերի կազմման ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշվածՏեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցինչհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իրհայեցողությամբսահմանելովանպատշաճորակի ծառայությունը պայմանագրինհամապատասխանող ծառայությամբանհատույցփոխարինմանողջամիտժամկետ ևպահանջել Կատարողից վճարելուպայմանագրի 5.2 կետովնախատեսվածտուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվելպայմանագիրըկատարելուցևպահանջելվերադարձնելու ծառայության համարվճարվածգումարը և պահանջել Կատարողից վճարելուպայմանագրի 5.2 կետովնախատեսվածտուգանքը.

2.1.3 Միակողմանիլուծելպայմանագիրը, եթե Կատարողնէականորենխախտելէպայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրըխախտելնէականէհամարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված10 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե մատուցված ծառայությունը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության գինը կազմում է 780.000 (յոթ հարյուր ութսուն հազար) ՀՀ դրամ:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 20-ը:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրինչհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ(ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը:Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմեր ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնա ծպարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայնԿողմերի փոխադարձ համաձայնությամբ՝համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագր իանբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել

ծառայության օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայությանմատուցմանժամկետըկարողէերկարաձգվելմեկանգամմինչև 30 օրացուցայինօրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքովկամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.9 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

7.10 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով:Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.11Սույն պայմանագիրը կազմված է 13էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.12ՍույնպայմանագրինկատմամբկիրառվումէՀայաստանի Հանրապետությանիրավունքը:

8.ԿՈՂՄԵՐԻՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸԵՎՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ՀՀ ԱՆ Քրեակատարողական ծառայություն	«Սարգիս և Մարիաննա» ՍՊԸ
ք. Երևան, Արշակունյաց-63	ք. Եղվարդ Նար-Դոս փ 28ա
ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն	Հ/Հ 163228137481
Հ/Հ 900011175016	«Հայէկոնոմբանկ» ՓԲԸ, Նաիրի մ/ճ
ՀՎՀՀ 02204739	ՀՎՀՀ 03308717
Ծառայության պետ՝ Ա.Մխոյան	Տնօրեն՝ Լ. Լևոնյան
/ստորագրություն/	/ստորագրություն/
Կ.Տ	Կ.Տ

Հավելված N 1
«26» «11» 2018թ. կնքված
ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԳՀԾՁԲ-18/12-2ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ծառայությունների							մատուցման	
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	ընդհանուր գինը /ՀՀ դրամ/	ընդհանուր քանակը	հասցեն	ժամկետը
Նախագծա-նախահաշվային փաստաթղթերի կազմման ծառայություններ, այդ թվում՝								
2	71321180/12	Խողովակաշարերի նախագծման ծառայություններ («Կոշ» ՔԿՀ)	Տես հավելված 1	ՀՀ դրամ	780000	1	ք.Երևան Արշակունյաց 63	2018թ. 4-րդ եռամսյակ

** ծառայության մատուցման վերջնաժամկետը չի կարող ավել լինել, քան տվյալ տարվա դեկտեմբերի 20-ը:*

Հավելված 1

ԳՆՄԱՆ ԱՌԱՐԿԱՅԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ *- ««Կոշ» քրեակատարողական հիմնարկի արտաքին և ներքին ջրահեռացման համակարգի, ճաշարանի վերանորոգման նախագծա-նախահաշվային փաստաթղթերի կազմման ծառայություններ»:*

1. ՆԵՐԱԾԱԿԱՆ

Հայաստանի Հանրապետությունում իրականացվող դատահիրավական բարեփոխումների բաղկացուցիչ մասն են կազմում քրեակատարողական ծառայության բարեփոխումները: Քրեակատարողական ծառայության բարեփոխումներում իրավական և այլ ուղղություններին զուգահեռ կարևորվում են ենթակառուցվածքային բարեփոխումները: Ծառայության զարգացումըենթադրումէնաևքրեակատարողական հին շինությունների վերափոխում:

Սույն առաջադրանքով նախատեսվում է ՀՀ արդարադատության նախարարության «Կոշ» քրեակատարողական հիմնարկի (այսուհետ՝ քրեակատարողական հիմնարկ, ՔԿՀ) արտաքիններքին ջրահեռացման համակարգի, ճաշարանի վերանորոգման նախագծա-նախահաշվային փաստաթղթերի մշակման աշխատանքները:

Սույն Տեխնիկական առաջադրանքը ներառում է ՔԿՀ-ի արտաքիններքինջրամատակարարմանև ջրահեռացման ցանցերի վերանորոգման, սանհանգույցների և բաղնիքների վերանորոգման համար տեղանքի սկզբնական ուսումնասիրումը, անհրաժեշտ բոլոր նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակումը: Տեխնիկական հատկորոշումները (սպեցիֆիկացիաները) և գծագրերը պետք է մշակված լինեն ամենայն մանրամասնությամբ Նախագծի կազմի մեջ ներառված բոլոր մասերի համար այն է՝

- գլխավոր հատակագիծ,

- ինժեներական մաս,
- նախահաշիվ.

ինչը հնարավորություն կտա շինարարություն իրականացնող կազմակերպության ընտրության մրցույթին մասնակցող բոլոր մասնակիցներին ունենալ պահանջվող ծավալների վերաբերյալ նույնատեսակ մոտեցումը: Նախագծի կազմի մեջ ներառման ենթակա ներկայացված մասերը հանդիսանում են նվազագույն պահանջ, սպառիչ չեն և Նախագծողը պարտավոր է լրացնել նախագծային փաստաթղթերը նոր մասերով, եթե դա անհրաժեշտ է: Սույն Տեխնիկական առաջադրանքը հանդիսանում է Պատվիրատուի կողմից տրվող Նախագծային առաջադրանք, որը պարտադիր է Նախագծողի կողմից կատարման համար:

2. ՆԱԽԱԳԾՈՂԻՑ ՊԱՀԱՆՋՎՈՂ ՓԱՍՏԱԹՂԹԵՐ ԵՎ ՄԱՍՆԱԳԵՏՆԵՐ

Առաջադրանքը կատարելու համար Նախագծողները պետք է ունենան որակավորման փաստաթղթեր.

- ՀՀ կառավարությանառընթերքաղաքաշինությանպետականկոմիտեիկողմից տրված լիցենզիա «քաղաքացիական փաստաթղթերի մշակման և փորձաքննության».
  1 լիցենզիայի ներդիր՝ «քաղաքաշինական փաստաթղթերի մշակում և փորձաքննություն՝ բնակելի, հասարակական և արտադրական»,
  2 լիցենզիայի ներդիր՝ «քաղաքաշինական փաստաթղթերի մշակում և փորձաքննություն՝ հիդրոտեխնիկական»:
- Համապատասխան փորձառու մասնագետներ վերը նշված առաջադրանքները կատարելու համար:

3. ԱՌԿԱ ԽՆԴԻՐՆԵՐԻ ԲԱՑԱՀԱՅՏՈՒՄ

Կատարվելիք աշխատանքների խոշորացված ծավալներ:

- ✓ Արտաքին և ներքին կոյուղու ցանց – մոտ 250 գծմ,
- ✓ ճաշարան – մոտ 140 քմ:

Հիմնարկը պետք է ունենա

Անհրաժեշտ է, որ ՔԿՀ-ի բոլոր շինություններն ունենան քրեակատարողական հիմնարկին հարիր համապատասխան ջրամատակարարման և ջրահեռացման համակարգ, սան. հանգույցներ և բաղնիքներ՝ սանիտարահիգիենիկ կանոնների պահպանմամբ: Միաժամանակ նշված հանգույցները գործառութային իմաստով պետք է լինեն միմյանցից տարանջատված:

4. ՆԱԽԱԳԾՈՂԻՑ ՊԱՀԱՆՋՎՈՂ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Սույն տեխնիկական առաջադրանքը կատարելիս, Նախագծողը պետք է ուղղորդվի ՀՀ տարածքում գործող նախագծային նորմատիվ փաստաթղթերով, ստանդարտներով և շինարարությունը կարգավորող այլ փաստաթղթերով: Անհրաժեշտ է, որ քրեակատարողական հիմնարկի բոլոր շինությունները ունենան քրեակատարողական հիմնարկին հարիր համապատասխան շինություններ և կոմունիկացիոն ցանցեր:

Հիմնարկը պետք է ունենա անվտանգության ապահովման բարձրագույն կատեգորիա:

Հատակագծային և տարածական լուծումների (արտաքին և ներքին տարածքների գոտիավորման) նախագծման համար պետք է հիմք հանդիսանա նմանատիպ կառույցների համար գոյություն ունեցող և կիրառվող միջազգային (հատկապես՝ եվրոպական) փորձը: Առաջադրանքը կատարելու ամբողջ ընթացքում Նախագծողը պարտավոր է սերտ համագործակցել Պատվիրատուի հետ անհրաժեշտ ուղեցույցներ ստանալու նպատակով: Միաժամանակ, առաջադրանքը կատարելիս Նախագծողը պարտավոր է առաջնորդվել ՀՀ կառավարության և ՀՀ կառավարությանառընթերքաղաքաշինությանպետականկոմիտեիկողմիցհաստատված նորմերով, փաստաթղթերով (ուղեցույցներով):

Ամբողջ նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմումը պետք է կատարվի ըստ հետևյալ փուլերի՝

I-ին փուլ՝ Կոմպլեքսային նախագիծ,

II-րդ փուլ Հաստատում և փորձաքննություն
III-րդ փուլ՝ Մրցութային փաստաթղթերի պատրաստում,
IV-րդ փուլ՝ Հեղինակային հսկողության իրականացում:

Յուրաքանչյուր փուլը ներկայացնում է աշխատանքների կատարման առանձին բաժիններ/մասեր, որոնց հանդեպ հիմնական պահանջները ներկայացվում են ստորև.

ՓՈՒԼ 1. ԿոմպլեքսայինՆախագիծ

Նախագծման I-ին փուլը իրենից ներկայացնում է կոմպլեքսային նախագծի մշակումը և բաժանվում է հետևյալ ենթափուլերի՝

- տեխնիկական/շինարարականանձնագրիկազմում,
- տեխնիկականնախագծիմշակում,
- աշխատանքայիննախագծիմշակում:

Ենթափուլ 1.1.Տեխնիկական/շինարարական անձնագիր

Նախքաննախագծայինաշխատանքներիսկսելը, Նախագծողը պարտավորէկազմելշինությանտեխնիկական/շինարարականանձնագիրը:
Տեխնիկական/շինարարականանձնագրիմեջպետքէներառվածլինեն.

- արտաքինևներքինջրագծիմիացմանկետերըևտեխնիկականպայմանները, տրվածհամապատասխանշահագործողկազմակերպություններիկողմից,
- ներքինևարտաքինկոյուղագծիմիացմանկետերը, տեխնիկականպայմանները, տրվածհամապատասխանշահագործողկազմակերպություններիկողմից,
- բոլորարտաքինևներքինկոմունիկացիաներիգծերիմենզուլայինհանույթներըՄ 1:1000 (գծերիամբողջականկամմասնակիհամընկմանդեպքում՝համատեղհանույթըՄ 1:500):

Ենթափուլ 1.2.Տեխնիկական (էսքիզային) նախագիծ

Նախքան նախագծում սկսելը, Նախագծողը պարտավոր է այցելել կառուցապատման վայրը, մանրամասն ուսումնասիրել և ծանոթանալ գոյություն ունեցող քաղաքաշինական իրավիճակին:

Նախագծողը պարտավոր է համագործակցելով Պատվիրատուի ներկայացուցիչների հետ: Պատվիրատուի նախընտրած այլընտրանքային լուծումը (լուծումները) Նախագծողը պարտավոր է համաձայնեցնել նաև տեղական համայնքի աշխատակազմի ճարտարապետության և աղաքաշինության վարչությանհետ: Տեղական համայնքի ճարտարապետության և քաղաքաշինության վարչության և Պատվիրատուի կողմից համաձայնեցված էսքիզային նախագիծը հիմք է հանդիսանալու հետագայում աշխատանքային նախագծի մշակման համար:

Ենթափուլ 1.3. ԱշխատանքայինՆախագիծ

Աշխատանքային նախագիծը, այսինքն՝ աշխատանքային գծագրերի մշակումը, հանդիսանում է սույն փուլի հիմնական ենթափուլը: Նախագծողից պահանջվում է մշակել աշխատանքային գծագրեր՝ «Գլխավոր հատակագիծ», «արտաքին և ներքին ջրամատակարարման ցանցեր և ներքին ջրահեռացման համակարգ», «սան. հանգույցներ ու բաղնիքներ» և «Նախահաշիվ»: Բոլոր աշխատանքային գծագրերը պետք է իրականացվեն AUTOCAD ծրագրային համակարգով:

Պարտադիր՝աշխատանքայինգծագրերիցանկըըստնախագծիբաժիններիևառանձինալբոմներիբերվումէստորև.

Բաժին 1. «Արտաքին և ներքին ջրամատակարարում», «Արտաքին և ներքին ջրահեռացման ցանց», «Սան. հանգույցներ և բաղնիքներ»:

- Ընդհանուր տվյալներ և տեղեկություններ,
- Ակսեոնոմետրիկ սխեմաներ,

- օգտագործվող սարքերի ևսարքավորումների մանրամասն տեխնիկական բնութագրերը,
- մասնագրեր և նյութածախսի ամփոփագրեր,
- ըստՆախագծողի հայեցողության այլ անհրաժեշտգ ծագրերը, որոնք կապահովեն նախագծի ամբողջականությունը:

Բաժին 2. «Նախահաշիվ»

Ամփոփ նախահաշիվ, օբյեկտային նախահաշիվներ, լոկալ նախահաշիվներ:

Նախահաշիվը պետք է կազմվի ՀՀ տարածքում գործող ՀՀ կառավարությանն առընթեր քաղաքաշինության պետական կոմիտեի կողմից հաստատված գնացուցակներով (բյուլետեններով, ինֆորմացիոն տեղեկագրով) և նորմերիհիման վրա: Հաշվարկը կատարվում է ՀՀ դրամով:

Բացի վերը նշված Նախահաշվից, Նախագծողը համակարգչային ֆայլով (ցանկացած ժամանակից կրիչով) պետք է ներկայացնի կատարվելիք աշխատանքների միավոր գների ցանկ և նախագծեր Պատվիրատուի կողմից ընդունելի ձևով:

Բաժին 3. «Շինարարության կազմակերպման նախագիծ»

- Շինարարական գլխավոր հատակագիծ,
- Անհրաժեշտ մարդկային ևնյութակա նռեսուրսները,
- Օրացուցային գրաֆիկ,
- Ըստ Նախագծողի հայեցողության այլ անհրաժեշտ գծագրեր և փաստաթղթեր, որոնք կապահովեն նախագծի ամբողջականությունը:

Աշխատանքային նախագիծը պատրաստելիս, Նախագծողը պետք է նախագծում արտացոլի նաև հետևյալ խնդիրների լուծումները՝

- ✓ քրեակատարողական հիմնարկի շենքային համալիրի համալիր անվտանգությունն ապահովող պահանջները (ելնելով միջազգային պրակտիկայում ներկայումս օգտագործվող չափանիշներից),
- ✓ շրջակա միջավայրի պահպանման պահանջները,
- ✓ կոնստրուկցիաների հակահրդեհային պաշտպանության պահանջները,
- ✓ կոմունիկացիաների կոռոզիայից պաշտպանելու միջոցառումները:

ՓՈՒԼ 2. Հաստատում և փորձաքննություն

Նախագծի հաստատումը հանդիսանում է նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման II-րդ փուլը և ներառում է նախագծի հաստատումը և փորձաքննությունը:

Նախագծի աշխատանքային գծագրերը՝ «Գլխավոր հատակագիծ», «արտաքին և ներքին ջրամատակարարման ցանցեր, ներքին ջրահեռացման համակարգ», «սան. հանգույցներ ու բաղնիքներե գծագրերըև «Նախահաշիվե-ը պիտի համաձայնեցված լինեն տեխնիկական անձնագրում արտաքին գծերի միացման պայմանները տվող շահագործող կազմակերպությունների և ծառայություններիհ ետ, այն են՝ջրմուղ-կոյուղի:

Նախագծային աշխատանքների ավարտից հետո, Նախագծողը Աշխատանքային նախագիծը, այսինքն՝ Նախագիծը իր բոլոր բաժիններով, այդ թվում նաև՝ Նախահաշիվը, պարտադիր կերպով ներկայացնում է համալիր փորձաքննության: Դիտողություններով վերադարձված նախագծերում Նախագծողը իր հաշվին և հնարավորինս կարճ ժամկետներում պարտավոր է կատարել համապատասխան ուղղումները և կրկին ներկայացնել փորձաքննությանը: Ընդ որում՝ ՆախագծովշինարարությանիրականացմանընթացքումցանկացածփոփոխությունՆախագծողկազմակերպությանհաշվինպետքէանցնինմանատիպփորձաքննություն, եթե դրա պահանջը ամրագրված է ՀՀ օրենսդրությամբ:

Նախագիծը համարվում է Պատվիրատուի կողմից ընդունված միայն համալիր փորձաքննության դրական եզրակացությունը ստանալու դեպքում:

ՓՈՒԼ 3. Մրցութայինփաստաթղթերիպատրաստում

Նախագծողի կողմից սույն Տեխնիկական Առաջադրանքի մրցութային փաստաթղթեր կազմում են «Գծագրեր» և «Տեխնիկական հատկորոշումներ/նորմեր և ստանդարտներ» բաժինները:

«Տեխնիկական հատկորոշումներ / նորմեր և ստանդարտներ եբաժնում Նախագծողը պետք է ներկայացնի տվյալ քրեակատարողական հիմնարկի շինարարության հետ կապված շինարարական բոլոր արտաքին աշխատանքների կատարման նկարագրությունը, որտեղ պետք է արտացոլվեն շինարարության կատարման ժամկետների պահանջները, նյութերինևկոնստրուկցիաներիններկայացվողպահանջները: Սույն բաժնում Նախագծողը Պատվիրատուի հետ համատեղ պետք է պատրաստի այն բոլոր լրացուցիչ պահանջները, որոնք ներկայացվելու են շինարարական նյութերի/ապրանքների և աշխատանքների որակին, որը պիտի պարտադիր լինի Կապալառուի համար՝ շինարարությունը իրականացնելու ընթացքում:

ՓՈՒԼ 4. Հեղինակային հսկողություն

Համաձայն ՀՀ քաղաքաշինության նախարարության կողմից հաստատված «Հրահանգ շինարարության նկատմամբ հեղինակային հսկողության իրականացման» հրահանգի, Նախագծողը պարտավոր է ամբողջ շինարարության ընթացքում պատշաճ և ժամանակին իրականացնել հեղինակային հսկողությունը, ապահովելով շինարարության իրականացման համապատասխանատվությունը հաստատված Աշխատանքայի նախագծի:

Նախագծողը պարտավոր է.

- հետևել կառուցվող օբյեկտի իրականացման համապատասխանությունը հաստատված նախագծի պահանջներին ու լուծումներին,
- եռօրյա, կամ առանձին դեպքերում Պատվիրատուի հետ համաձայնեցված այլ ժամկետներում, լուծել նախագծին վերաբերող՝շինարարության ընթացքում ծագած հարցերը,
- գրանցել նախագծայինլ ուծումներից կատարված շեղումները և այդ մասին տեղյակ պահե լՊատվիրատուին,
- անհրաժեշտության դեպքում սահմանված կարգով կատարել նախագծային լուծումների փոփոխություններ և լրացումներ,
- այցելել կառուցվող օբյեկտ առնվազն շաբաթը երկու անգամ, ինչպես նաև Պատվիրատուի հատուկ կանչով նշված ժամկետում:

Պատվիրատուն պարտավորվում է իր իրավասության սահմաններում օժանդակել հեղինակին շինարարության նկատմամբ հեղինակային հսկողության լիարժեք ապահովման համար:

Հեղինակային հսկողությունն ավարտվում է շինարարական օբյեկտը շահագործման ընդունող հանձնաժողովի ակտը սահմանված կարգով ձևակերպելուց հետո:

ՓՈՒԼ 5. Կողմերին տրամադրվող փաստաթղթերը

Սույնառաջադրանքը կատարելու համար Պատվիրատուն տրամադրում է Նախագծողին հետևյալ փաստաթղթերը՝

- ❖ տեղական համայնքի կողմից տրված ճարտարապետահատակագծային առաջադրանքը:

Նախագծողը համաձայն սույն Տեխնիկական առաջադրանքիՊ ատվիրատուին է հանձնում առնվազն հայերեն լեզվով հետևյալ փաստաթղթերը նշված քանակությամբ՝

- ❖ տեխնիկական անձնագիրը՝ 3 օրինակից,
- ❖ համաձայնեցված աշխատանքային նախագիծը՝ 4 օրինակ և մեկ օրինակ էլեկտրոնային կրիչով,
- ❖ համալիր փորձաքննության դրական եզրակացությունը՝ 2 օրինակից,
- ❖ նախահաշիվը տպած՝ 2 օրինակից և մեկ օրինակ էլեկտրոնային կրիչով,

- շինարարության կազմակերպման նախագիծը՝ 4 օրինակից,
- տեխնիկական հատկորոշիչները՝ 2 օրինակ տպագիր և մեկ օրինակ էլեկտրոնային կրիչով:

ՓՈՒԼ 6. Կատարման ժամկետներ և ներկայացվող նյութերը

Քրեակատարողական հիմնարկի «Գլխավոր հատակագիծ, «արտաքին և ներքին ջրամատակարարման ցանցեր, ներքին ջրահեռացման համակարգ», «սան. հանգույցներ ու բաղնիքներ» գծագրերըև «Նախահաշիվ»: Նախագծանախահաշվային աշխատանքները պետք է իրականացվեն ստորև բերվող ժամանակացույցի համաձայն: Առաջադրանքը պետք է կատարվի սույն տեխնիկական առաջադրանքով նախատեսված փուլերով և ենթափուլերով: Նախագծողի կողմից ներկայացվող նյութերը պետք է ընդունվեն Պատվիրատուի կողմից նշանակված աշխատանքների ղեկավարի կողմից սահմանված կարգով:

Նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման և ներկայացման համար (առաջադրանքի I, II և III փուլեր) սահմանվում է ընդհանուր առմամբ առավելագույնը 20 (քսան) օր ժամանակ, հեղինակային հսկողությունը կիրականացվի շինարարության ընթացքում և ավարտ կսահմանվի շինարարական ավարտական ակտի սահմանված կարգով ձևակերպումից հետո: Ընդ որում, առաջադրանքը անհրաժեշտ է կատարվի և ներկայացման ենթակա նյութերը Պատվիրատուին պետք է տրամադրվեն քսան օրվա ընթացքում:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ՀՀ ԱՆ Քրեակատարողական ծառայություն	«Սարգիս և Մարիաննա» ՍՊԸ
ք. Երևան, Արշակունյաց-63	ք. Եղվարդ Նար-Դոս փ 28ա
ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն	Հ/Հ 163228137481
Հ/Հ 900011175016	«Հայէկոնոմբանկ» ՓԲԸ, Նաիրի մ/ճ
ՀՎՀՀ 02204739	ՀՎՀՀ 03308717
Ծառայության պետ՝	Տնօրեն՝
Ա.Մխոյան	Լ. Լևոնյան
/ստորագրություն/	/ստորագրություն/
Կ.Տ	Կ.Տ

Հավելված N 2
«26» «11» 2018թ. կնքված
ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԳՀԾՁԲ-18/12-2ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀդրամ

Ծառայության							
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումներիպլան ովնախատեսվ ածմիջանցիկծ ածկագիրը՝ ըստԳՄԱդասա կարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2018 թ-ին՝ ըստ եռամսյակների, այդ թվում				
			I եռամսյակ	II եռամսյակ	III եռամսյակ	IV եռամսյակ	Ընդամենը
2	71321180/12	Խողովակաշարերի նախագծման ծառայություններ («Կոշ» ՔԿՀ)	0	0	0	780000	780000

** Վճարմանենթակագումարներըներկայացվում են ամողականկարգով:*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ ԱՆ Քրեակատարողական ծառայություն
Ք. Երևան, Արշակունյաց-63
ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011175016
ՀՎՀՀ 02204739

Ծառայության պետ՝
Ա.Մխոյան

/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՏԱՐՈՂ

«Սարգիս և Մարիաննա» ՍՊԸ
Ք. Եղվարդ Նար-Դոս փ 28ա
Հ/Հ 163228137481
«Հայէկոնոմբանկ» ՓԲԸ, Նաիրի մ/ճ
ՀՎՀՀ 03308717

Տնօրեն՝
Լ. Լևոնյան

/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված N 3
«26» «11» 2018թ. կնքված
ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԳՀԾՁԲ-18/12-2ծածկագրով պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելուվայրը _____	գտնվելուվայրը _____
հհ _____	հհ_____
_____	_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻԿԱՄԴՐԱՄԻՄԱՍԻԿԱՏԱՐՄԱՆԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝ _____
Պայմանագրիկնքմանամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրիհամարը՝ _____
Պատվիրատուն՝ ի դեմս _____ և
Պայմանագրի կողմը՝ ի դեմս_____, հիմք ընդունելով Պայմանագրի կատարման վերաբերյալ «____» «_____» 20 թ. կազմված՝ գնման հայտը նախագծած ներկայացուցչի N եզրակացությունն այն մասին, որ Պայմանագրով նախատեսված՝ ստորև նշված ծառայությունները համապատասխանում են Պայմանագրով ամրագրված տեխնիկական բնութագրերին և գնման ժամանակացույցին՝ կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները՝

N	Մատուցվածծառայությունների						Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը			
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Վերոհիշյալ ծառայությունների մատուցման վերաբերյալ բոլոր հաշիվ-ապրանքագրերը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց	Ծառայությունն ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված N 3.1
« 26 » « 11 » 2018թ. կնքված
ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԳՀԾՁԲ-18/12-2ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է,որ_____-ի(այսուհետ՝ Պատվիրատու) և _____-ի
Պատվիրատուի անունը Կատարողի անունը

(այսուհետ՝ Կատարող)միջև 20 թ. _____ -ին կնքված N_____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը

գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

Ծառայության		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Ընդունեց

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն